Ձև N 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 4/Ա- 7

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)

ՀՀ Կոտայքի մարզի համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-1, Կոտայք-2, Կոտայք-3, Կոտայք-4, Կոտայք-5, Կոտայք-6, Կոտայք-7, Կոտայք-8, Կոտայք-9, Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի մշակման քաղաքաշինական նախագծման առաջադրանքների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ և 14-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-1, Կոտայք-2, Կոտայք-3, Կոտայք-4, Կոտայք-5, Կոտայք-6, Կոտայք-7, Կոտայք-8, Կոտայք-9, Կոտայք-10 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքներին:

2. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «31» «հոկտեմբեր» 2022 թ.